ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

ի պատասխան Ձեր 01.05.2026թ. գրության՝ Այծեմնիկ Ուրարտուի փողոցի հ. 44 հասցեի հարակից տարածքից լսվող կենդանու կամ թռչնի ձայների վերաբերյալ, տեղեկացվում է, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ դիմումում նշված ձայներն առաջանում են Սուրեն Սաֆարյան փողոցի հ. 13 հասցեում թռչուն (սիրամարգ) պահելու հետևանքով, որը Երևան քաղաքի ավագանու 14.09.2021 թվականի N442-Ն որոշման հավելվածով սահմանված՝ Երևան քաղաքում տնային կենդանիների պահման կանոներին չի հակասում:

Տեղեկացվում է նաև, որ Հայաստանի Հանրապետության տարածքում, այդ թվում՝ Երևան քաղաքում բարձր աղմուկի հետ առաջացած խնդիրները կարգավորվում են «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 6-ի հ.138 հրամանով հաստատված հավելվածի համաձայն, որով սահմանված նորմերը չպահպանելու վերաբերյալ համապատասխան վարչարարությունը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված համապատասխան մասնագիտական եզրակացության հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ